ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ **17.08.2021Թ.**

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 11 անդամները:

Բացակայում են Մ. Գասպարյանը, Տ. Եփրեմյանը, Ն.Վարդանյան:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Հ. Շահգալդյանը:

Համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանի հրավերով ավագանու նիստին մասնակցում են համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր՝ Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա. Զաքարյանը, Գ. Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Հաստատել համայնքի ավագանու թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Չարենցավան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմում Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմից ներկայացուցիչ ընդգրկելու մասին:
3. Չարենցավան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրությունը հաստատելու մասին:
4. Չարենցավան համայնքի 2022 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները հաստատելու մասին:
5. «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» (ՀՀՏԶ) ծրագրին Չարենցավան համայնքի անդամակցության վերահաստատման մասին:
6. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 54 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. ***Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:***

/Զեկ. Գ. Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդված 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով՝ ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 56-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելված N 2-7.

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. ***Չարենցավան համայնքի համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմում Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմից ներկայացուցիչ ընդգրկելու մասին:***

/Զեկ. Ս.Մուրադյան /

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 42-րդ կետը և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն համանի 7–րդ կետը ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ստեղծվող մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ ***Սերգեյ Հովհաննիսյանին:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3.Չարենցավան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրությունը հաստատելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան /

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետը, **Հայաստանի Հանրապետության կառավարություն** 2021 թվականի ապրիլի 08-ի թիվ 515-Ն որոշումը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը ***առաջարկում եմ.*** Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Զանգակ» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 1-ի:

1. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Ա. Գրիգորյանի անվան «Ծիծեռնակ» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 2-ի:
2. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Հեքիաթ» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 3-ի:
3. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Լուսաբաց» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 4-ի:
4. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Հրաշք» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 5-ի:
5. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 6-ի:
6. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 7-ի:
7. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Բջնի գյուղի մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելված 8-ի:

Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 08-ի թիվ 51-Ն, Ալափարս համայնքի ավագանու 2005 թվականի հունվարի 07-ի թիվ 1/1, Բջնի համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 48, Արզական համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 25-ի թիվ 21-Ա որոշումները

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4.Չարենցավան համայնքի 2022 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները եվ դրանց ֆինանսավորման համամասնությունները հաստատելու մասին:

/Զեկ. Վ. Չիլինգարյան /

Հաշվի առնելով, որ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Չարենցավան համայնքի կողմից ներկայացված «Չարենցավան համայնքի 2022 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները» ծրագիրը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից, ղեկավարվելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի գ) կետի 4-րդ պարբերության դրույթներով՝ ***առաջարկում եմ.*** տալ համաձայնություն Չարենցավան համայնքի կողմից 2022 թվականին իրականացվելիք բնապահպանական ծրագրին՝ համաձայն հավելված(NN 1.2):

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5.«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» (ՀՀՏԶ) ծրագրին Չարենցավան համայնքի անդամակցության վերահաստատման մասին:

/Զեկ. Ա.Ծերունյան/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» 13-րդ հոդվածի 10-րդ կետը ***առաջարկում եմ.*** լիազորել Չարենցավան համայնքի ղեկավարին՝ վերահաստատելու համայնքի անդամակցությունը Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) կողմից մեկնարկված «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» (ՀՀՏԶ) ծրագրին՝ երկրորդ փուլում (2021-2024թթ.), անդամակցության համապատասխան հայտն ուղարկելով Հայաստանում ՀՀՏԶ քարտուղարություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6.Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 54 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2021 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 54 որոշման հավելվածի 2-րդ տողը շարադրել նոր խմբագրությամբ:

Համայնքի Ղեկավարի տեղակալ	**Քաղաքական**		**1**	**300000**	**0**	**0**	**300000**

«Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2021 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելո ւմասին» թիվ 54 որոշման հավելվածում ավելացնել 65-րդ տողը:

Համայնքի Ղեկավարի գլխավոր խորհրդական	**Հայեցողական**		**1**	**300000**	**0**	**0**	**300000**

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 դեմ-0 ձեռնպահ-0

Բաբայան Նարեկ

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գրիգորյան Հակոբ

Դավթյան Կարեն

Երիցյան Գագիկ

Խլղաթյան Արսեն

Պողոսյան Մնացական

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Փանոսյան Արթուր

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ